ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 21

28 մարտի, 2020 թվական

ՊԱՐԵՏԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ՝

1. Պարետի՝ «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ» 2020 մարտի 24-ի N16 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) 2-րդ կետի 1-ին ենթակետում «գրության» բառը փոխարինել «թղթային կամ հեռախոսային հավելվածի միջոցով լրացված թերթիկի» բառերով"
   2) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «գրության» բառը փոխարինել «թղթային կամ հեռախոսային հավելվածի միջոցով լրացված թերթիկի» բառերով"
   3) 2-րդ կետի 3-րդ ենթակետում «սահմանված ձևաչափով լրացված թղթի» բառերը փոխարինել «թղթային կամ հեռախոսային հավելվածի միջոցով լրացված թերթիկի» բառերով"
   4) 4-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ «ՀՀ ոստիկանությանը վերապահել սույն որոշման 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված անձը հաստատող փաստաթղթի և թղթային կամ հեռախոսային հավելվածի միջոցով լրացված թերթիկի առկայության ստուգումը» բառերով"
2. Սույն որոշման իմաստով ընդունելի հեռախոսային հավելվածներ են համարվում այն հավելվածները, որոնք թույլ են տալիս գեներացնել սահմանված ձևի տեղաշարժման թերթիկ՝ ապահովելով տվյալ թերթիկի վերափոխումը անփոփոխ PDF կամ համանման ֆորմատի փաստաթղթի՝ պաշտպանված QR կոդով կամ առանց դրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 28/03/20 14:46:34 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ